ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

"10" մայիսի 2026 թվական N 05-Ն

ք. Երևան

ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի դրույթներով.

1. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Սպորտ. «Ֆուտբոլի աշխարհի առաջնություն» թեմային նվիրված «Ֆուտբոլի աշխարհի առաջնություն. FIFA World Cup. ԱՄՆ, ԿԱՆԱԴԱ, ՄԵՔՍԻԿԱ. USA, CANADA, MEXICO» նամականիշի, համաձայն N 1 հավելվածի.

2) Միջազգային. «Եվրոպական քաղաքական համայնքի» 8-րդ գագաթնաժողովը Երևանում թեմային նվիրված «EUROPEAN POLITICAL COMMUNITY. ԵՔՀ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ. 04.05.2026. ԵՐԵՎԱՆ» նամականիշի, համաձայն N 2 հավելվածի.

3) Մեծանուն հայեր. Ջիմ Թորոսյանի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ. ARMENIAN ARCHITECT. 100 ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆ. JIM TOROSYAN» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 3 հավելվածի:

2. Գործողության մեջ դնել՝

1) Սպորտ. «Ֆուտբոլի աշխարհի առաջնություն» թեմային նվիրված «Ֆուտբոլի աշխարհի առաջնություն. FIFA World Cup. ԱՄՆ, ԿԱՆԱԴԱ, ՄԵՔՍԻԿԱ. USA, CANADA, MEXICO» նամականիշը, անվանագինը՝ 500 դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ.

2) Միջազգային. «Եվրոպական քաղաքական համայնքի» 8-րդ գագաթնաժողովը Երևանում թեմային նվիրված «EUROPEAN POLITICAL COMMUNITY. ԵՔՀ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ. 04.05.2026. ԵՐԵՎԱՆ» նամականիշը, անվանագինը՝ 320 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ.

3) Մեծանուն հայեր. Ջիմ Թորոսյանի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ. ARMENIAN ARCHITECT. 100 ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆ. JIM TOROSYAN» 1 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 560 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

4/10/2026

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 **ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թվականի մայիսի 10-ի թիվ 05-Ն հրամանի

Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թվականի մայիսի 10-ի թիվ 05-Ն հրամանի

Հավելված 3
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2026թվականի մարտի 10-ի թիվ 05-Ն հրամանի

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ВЫСОКОТЕХНОЛОГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF HIGH-TECH INDUSTRY OF THE REPUBLIC OF ARMENIA
02565518